30
ՆՈՅԵՄԲԵՐԻ
2021

Luys Լույս®

ԼԻԼԻԹ ՄԱԿՈՒՆՑԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 100 ՕՐԸ

Նախաբան

Վաշինգտոնը, ինչպես և ցանկացած այլ դեսպանընկալ երկրի մայրաքաղաք, ունի իր առանձնահատկությունները, ավանդույթներն ու բնորոշ հատկանիշները: Ի տարբերություն շատ ու շատ այլ մայրաքաղաքների՝ Վաշինգտոնն ավելի բաց ու թափանցիկ է, պետական ապարատն առավել հասանելի է, իսկ քաղաքական որոշումներ կայացնողների վրա ազդեցության հնարավորություններն ու շրջանակները՝ առավել լայն: Վաշինգտոնում հավատարմագրված ցանկացած դեսպանի համար այս երկրում որոշումների կայացման մեխանիզմներն աննախադեպ թափանցիկ են, ամեն ինչի շուրջ կարելի է իրականացնել քննարկումներ, առաջարկել այլընտրանքային լուծումներ, ազդեցություն ունենալ քաղաքական վերջնական որոշումների կայացման վրա՝ կիրառելով տարաբնույթ գործիքներ և միանգամայն օրինական միջոցներ:

Այս առումով, ԱՄՆ-ում հավատարմագրված Հայաստանի ցանկացած դեսպան, նշանակման պահից ի վեր, պետք է առաջնահերթություն տա և աշխատի ներքոշարադրյալ հիմնական և առաջնային ուղղություններով.

- Աշխատանք համայնքի հետ
- Աշխատանք եկեղեցու հետ
- Աշխատանք գործադիր մարմնի հետ
- Աշխատանք գիտական կենտրոնների հետ
- Աշխատանք էթնիկ և պրոֆեսիոնալ լոբբիստական կառույցների հետ
- Աշխատանք Կոնգրեսի՝ «հանրապետականներ vs դեմոկրատների» հետ
- Հանրային դիվանագիտություն
- Աշխատանք ԱՄՆ-ում հավատարմագրված այլ դեսպանների հետ
- Աշխատանք մամուլի հետ

- Աշխատանք ԱՄՆ ազգային կառույցների և կրոնական կազմակերպությունների հետ
- Այլ ուղղություններ

Սույն աշխատության նպատակն է ուսումնասիրել ԱՄՆ-ում Հայաստանի Հանրապետության 7-րդ դեսպան տիկին Լիլիթ Մակունցի կողմից պաշտոնավարման առաջին 100 օրերի ընթացքում իրականացված գործունեությունը՝ վերոշարադրյալ, ինչպես նաև այլ ուղղություններով:

Ընտրված ժամանակահատվածը կներառի դեսպանի կողմից առաջին պաշտոնական տեղեկատվության հրապարակման պահը՝ օգոստոսի 17-ը (համաձայն դեսպանության ֆեյսբուքյան էջի)[1] հաջորդող հարյուր օրերի հաշվարկով:

Սույն աշխատության մեջ օգտագործվել են բացառապես բաց աղբյուրներից և պաշտոնական հաղորդագրություններից ստացված տեղեկություններ:

Առաջին 100 օրերը

Տիկին Լիլիթ Մակունցը նշանակվեց Ամերիկայի Միացյալ Նահանգներում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան ՀՀ նախագահի օգոստոսի 2-ի հրամանագրով:[2] Սեպտեմբերի 15-ին ԱՄՆ նախագահ Ջո Բայդենն ընդունեց տիկին Մակունցի հավատարմագրերը, որով վերջինս պաշտոնապես ստանձնեց ԱՄՆ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի պարտականությունները: Սակայն, պատմության մեջ առաջին անգամ Հայաստանի դեսպանը ընդունելության չարժանացավ Սպիտակ տան Օվալաձև աշխատասենյակում՝ հավատարմագրերը հանձնելու կապակցությամբ, պայմանավորված կորոնավիրուսային համաճարակով:[3] ԱՄՆ-ում դեսպանների հավատարմագրերի ընդունման արարողակարգի փոփոխման արդյունքում ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը և Լիլիթ Մակունցը անձամբ չփոխանակեցին ուղերձները, այլ դա տեղի ունեցավ գրավոր հեռավար ընթացակարգով:[4] Միաժամանակ պետք է նշել, որ նույն օրերին նախագահ Բայդենը Սպիտակ տանը շարունակում էր ընդունել հարյուրավոր հյուրերի ու պատվիրակությունների, և սահմանափակումները չէին տարածվում բոլորի վրա:

---

[1] Դեսպանության ֆեյսբուքյան պաշտոնական էջի գրառումը, https://bit.ly/3FLqmOr.

[2] ՀՀ նախագահի հրամանագիրը Ամերիկայի Միացյալ Նահանգներում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան նշանակելու վերաբերյալ, https://www.mfa.am/hy/press-releases/2021/08/02/usa-arm/11021.

[3] Ջ. Բայդենը ընդունեց ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Լ.Մակունցի հավատարմագրերը, https://bit.ly/3DSlYgc.

[4] ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը և ՀՀ դեսպան Լիլիթ Մակունցը ուղերձները փոխանակեցին գրավոր, https://bit.ly/30XOFtk.

Աշխատանքը հայ համայնքի հետ

Վաշինգտոնում հավատարմագրված Հայաստանի ցանկացած դեսպանի հաջողության թիվ մեկ գրավականը տեղի հայ համայնքի, հայկական կազմակերպությունների, էթնիկ լոբբիստական կառույցների և ավանդական կուսակցությունների հետ տարվող աշխատանքներն ու անխափան համագործակցությունն է: Այս աշխատանքի արդյունքում հնարավոր է լինում հայկական համայնքի միջոցով ազդեցություն ունենալ Կոնգրեսի, իսկ Կոնգրեսի միջոցով՝ նաև վարչակազմի քաղաքական որոշումների վրա:

Պաշտոնավարման առաջին իսկ օրերից դեսպան Մակունցը ակնհայտորեն խուսափում է Վաշինգտոնի, Նյու Յորքի, Լոս Անջելեսի, Բոստոնի (առավել խիտ բնակվող) հայկական համայնքների հետ բաց հանդիպումներից և առաջնահերթություն է տալիս ոչ թե խոշոր համայնքային կենտրոններին, այլ այն քաղաքներին, որտեղ ձևավորված հայկական համայնքը առավել հին (երրորդ, չորրորդ սերնդի) և փոքր է:[5] Ըստ հայկական մամուլի տեղեկությունների՝ Մակունցը բավական մանրակրկիտ էր ուսումնասիրել Հայաստանի դեսպանության հյուրերի ցանկը Անկախության տոնի կապակցությամբ կազմակերպված միջոցառման ժամանակ՝ խուսափելու համար հնարավոր բողոքի ակցիաներից և այլ տհաճ միջադեպերից:[6] Օրինակ, նման ակցիա տեղի էր ունեցել Վաշինգտոնի հայկական եկեղեցու բակում, երբ այնտեղ տեղակայվել էր «Go Home Lilit Makunts» պաստառը:[7] Մեկ այլ օրինակ էր դեսպանության դիմաց ՀՅԴ երիտասարդների կողմից կազմակերպված բողոքի ակցիան՝ ընդդեմ Հայաստանի դեսպանությունում սեպտեմբերի 21-ի տոնական ընդունելության կազմակերպման, սակայն դեսպանությունը ոստիկանություն էր կանչել՝ երիտասարդ դաշնակցականների բողոքի լուռ ակցիան ցրելու համար:[8] Մասշտաբային միջոցառումներից խուսափելու մեկ այլ օրինակ էր հայ համայնքի ջանքերով կազմակերպված հայկական ուտեստների և արվեստի փառատոնը, որին դեսպանը հրաժարվել էր մասնակցելուց՝

[5] Տե՛ս, օրինակ, Ֆրեզնոյի և Օհայո նահանգի Քլիվլենդ քաղաքի հայ համայնքի հետ հանդիպումները:
[6] Մակունցը չի կարողանում լեզու գտնել հայ համայնքի հետ, https://hraparak.am/post/cd53d6809599669874a4ae66b23aa76c
[7] «Գնա տուն, Լիլիթ Մակունց». ԱՄՆ-ում Մակունցին լավ չեն ընդունել, https://hraparak.am/post/b9fecc6a0c1567b3421d9c55a65b2f38
[8] ՀՅԴ երիտասարդների կողմից կազմակերպված բողոքի ակցիան, https://bit.ly/3oZRnXN.

չնայած անցկացման վայրը բավական մոտ էր գտնվում Հայաստանի դեսպանատանը:[9]

Լինելով Նյու Յորքում՝ Լիլիթ Մակունցը հանդիպում էր կազմակերպել Ամերիկայի հայ իրավաբանների ասոցիացիայի հետ, որի հարյուրավոր անդամներից եկել էին մասնակցելու միայն 10 իրավաբան (կազմակերպության ղեկավարությունը նույնպես բացակայում էր): Ինչպես նկատել էին հայկական մամուլում. «Մակունցն իր թվիթերյան էջում նշել է, որ հանդիպել է ասոցիացիայի հոգաբարձուների խորհրդի անդամների հետ, սակայն իրականում անգամ խորհրդի նախագահ Լյուսի Վարպետյանը ներկա չի եղել: Ավելին, կազմակերպության թե՛ թվիթերյան, թե՛ ֆեյսբուքյան և թե՛ պաշտոնական կայքում միջոցառումը որոշել են չլուսաբանել: Մակունցը միայն իր թվիթերում է գրառում արել, սակայն փակել է մեկնաբանությունների հնարավորությունը»:[10]

Գրառմանը անդրադարձել էր նաև իրավապաշտպան Ռուբեն Մելիքյանը՝ գրելով. «Նոր նկատեցի, որ ԱՄՆ Հայաստանի վայ-դեսպան Լիլիթ Մակունցը թվիթերում հրապարակել է լուսանկար՝ իբրև Ամերիկայի հայ փաստաբանների միության ղեկավար խորհրդի անդամների հետ հանդիպման մասին: Նախ, տարակուսած եմ, քանի որ շատ լավ եմ ճանաչում ՀՓՄ (Armenian Bar) ղեկավար կազմին, նրանց հետ կազմակերպել եմ ՀՓՄ տարեկան համաժողովը Շուշիում 2018 թվականին, և այս լուսանկարում ՀՓՄ ոչ մի ծանոթ անդամ չնկատեցի: Ու՞մ հետ է, ի վերջո, հանդիպել Մակունցը: ՀԳ. Ասեմ շատ ուղիղ. հույս ունեմ, որ ԱՄՆ հայ համայնքը նիկոլի դեսպան

[9] Մակունցը հայ համայնքի կազմակերպած միջոցառմանը չի մասնակցել, https://hraparak.am/post/2b87256d1a4cd53e25332c40ca76dd4a
[10] Մակունցի հետ հանդիպմանն ընդամենը 10 մարդ է եկել, https://hraparak.am/post/35877e208a0bd5cf519059d5ce8e4f31

Մակունցին կվերաբերվի որպես բարևազուրկի»:[11] Այս հանդիպումից անմիջապես հետո Նյու Յորքում գտնվող Լիլիթ Մակունցը թվիթերյան գրառում էր արել առ այն որ, անհամբեր սպասում է սերտ համագործակցությանը Նյու Յորքում գործող հայկական ասոցիացիաների և ընկերությունների հետ՝ Ամերիկայի հայ գիտնականների և ճարտարագետների, բանկային և ֆինանսական ոլորտի մասնագետների հետ:[12] Սակայն, դատելով հետագա զարգացումներից, կարելի է եզրակացնել, որ Մակունցի հետ այդպես էլ որևէ մեկը հանդիպելու ցանկություն չի հայտնել, քանի որ դրանից հետո որևէ հանդիպման վերաբերյալ գրառում չի արվել:

Աշխատանքը եկեղեցու հետ

Արտաքին քաղաքականության արդյունավետ իմպլեմենտացիայի կարևորագույն տարրերից է եկեղեցական դիվանագիտությունը, մանավանդ երբ խոսքը Հայաստանի արտաքին քաղաքականության մասին է: Սովորաբար եկեղեցին չափազանց ազդեցիկ գործոն է պետության հասարակական, կրոնական, հաճախ նաև քաղաքական կյանքում: ԱՄՆ-ում եկեղեցու դերը՝ ընդհանրապես և հայկական եկեղեցու դերը՝ մասնավորապես բավական մեծ է: ԱՄՆ-ում գործում են հարյուրավոր հայկական եկեղեցիներ, որոնց հիմնական գործառույթներից է նաև համայնքի համախմբումը: Բազմաթիվ խնդիրներ կարելի է լուծել հենց եկեղեցու և եկեղեցու առաջնորդների միջոցով, ովքեր ազդեցիկ և հեղինակավոր հոգևորականներ են: Այս առումով Հայ Առաքելական, Հայ Ավետարանական, Կաթոլիկ և այլ եկեղեցիները բավական ծանրակշիռ գործոններ են ԱՄՆ-ում: Ուսումնասիրվող ժամանակահատվածում դեսպան Մակունցը որևէ հանդիպում չի ունեցել ԱՄՆ-ում գործող որևէ հայկական եկեղեցու առաջնորդի, այդ թվում՝ արևելյան և արևմտյան թեմերի առաջնորդների հետ: Միակ բացառությունը եղել է Քլիվլենդում կազմակերպված մշակութային միջոցառմանը մասնակցելու շրջանակներում եկեղեցի այցելությունը:[13]

[11] Ո՞ւմ հետ է, ի վերջո, ԱՄՆ-ում հանդիպել Մակունցը, https://www.24news.am/news/200926.
[12] Հանդիպում Ամերիկայի հայ փաստաբանների միության անդամների հետ, https://twitter.com/LilitMakunts/status/1448827242088439809?s=20
[13] Լիլիթ Մակունցի հանդիպումը Քլիվլենդի հայ համայնքի հետ, https://bit.ly/32mEwXU.

Աշխատանք գործադիր մարմնի հետ

Ընդունող պետության գործադիր իշխանության հետ աշխատանքը ցանկացած դեսպանի համար կարևորագույն առաջնահերթություն է: ԱՄՆ պարագայում խոսքը կարող է գնալ Սպիտակ տան, Անվտանգության խորհրդի, Պետդեպարտամենտի, Պենտագոնի և այլ կառույցների հետ: Այս առումով ևս առաջին հարյուր օրերը առանձնապես աչքի չեն ընկել բարձր մակարդակի հանդիպումներով և շփումներով:

Պաշտոնը ստանձնելուց հետո տիկին Մակունցի առաջին հանդիպումը տեղի ունեցավ օգոստոսի 18-ին, երբ նա մասնակցեց ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հայաստանյան առաքելության տնօրենի պարտականությունները ստանձնած Ջոն Ալելոյի երդմնակալության արարողությանը[14] և օգոստոսի 19-ին՝ վերջինիս հետ իրականացված հանդիպմանը՝ պաշտոնը ստանձնելու կապակցությամբ:[15]

Սեպտեմբերի 20-ին Լիլիթ Մակունցը հանդիպել է ԱՄՆ պաշտպանության քարտուղարի՝ միջազգային անվտանգության հարցերով օգնականի պարտականությունները իրականացնող Լորա Քուփերի հետ:[16]

Հատկանշական է, որ Վաշինգտոնում Հայաստանի դեսպանության սեպտեմբերի 21-ի միջոցառմանը մասնակցել է ԱՄՆ պետքարտուղարի՝ քաղաքացիական անվտանգության, ժողովրդավարության, մարդու իրավունքների հարցերով տեղակալ Ուզրա Զեյան, այլ ոչ թե Քերընն Դոնֆրիդը, ով պետքարտուղարի Եվրոպայի և Եվրասիայի հարցերով օգնականն է և համակարգում է նաև հայաստանյան ուղղությունը: Այսինքն՝ կա՛մ Հայաստանը Վաշինգտոնում դիտարկվում է ոչ թե երկկողմ հարաբերությունների առաջնահերթությամբ, այլ միջազգային անվտանգության առաջնահերթությամբ, կա՛մ նման շփումները կրում են արարողակարգային բնույթ: Առավել հավանական է երկրորդ տարբերակը:[17] Լիլիթ

---

[14] Տե՛ս հղում 1:

[15] Դեսպան Մակունցի հանդիպումը ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության տնօրենի հետ, https://usa.mfa.am/hy/news/2021/08/19/դեսպան-մակունցի-հանդիպումը-ամն-մզգ/9430.

[16] Դեսպան Մակունցի հանդիպումը ԱՄՆ պաշտպանության քարտուղարի՝ Միջազգային անվտանգության հարցերով տեղակալի պարտականությունները կատարող Լորա Քուփերի հետ, https://usa.mfa.am/hy/news/2021/09/20/դեսպան-մակունցի-հանդիպումը/9532.

[17] Հայաստանի Հանրապետության անկախության 30-ամյակին նվիրված ընդունելությունը https://bit.ly/3xkG0xt.

Մակունցը ԱՄՆ Ազգային անվտանգության խորհրդի եվրոպական հարցերով ավագ տնօրեն Ամանդա Սլոթի հետ հեռախոսազրույց է ունեցել հոկտեմբերի 1-ին:[18]

Հանրային դիվանագիտություն

Հանրային դիվանագիտությունը Լիլիթ Մակունցի ուժեղ կողմերից չէ: Պաշտոնավարման ամենասկզբից դեսպան Մակունցն արգելափակել է ԱՄՆ-ում Հայաստանի դեսպանության պաշտոնական էջի մեկնաբանությունների հնարավորությունը, ինչպես նաև ապաակտիվացրել է իր անձնական ֆեյսբուքյան էջը: Նույնը վերաբերում է թվիթերյան պաշտոնական էջերին, որոնց տարիներ շարունակ հետևել են հազարավոր ամերիկահայեր և իրենց կարծիքներով և գաղափարներով են կիսվել երկկողմ հարաբերությունների վերաբերյալ: Այս քայլով դեսպանն իրականում նվազեցրել է դեսպանության էջի հասանելիությունն ու դիտումների քանակը՝ վնասելով սոցիալական հարթակներում հայկական դիվանագիտությանը: Այս ամենը տեղի է ունեցել ԱՄՆ-ում ընթացող քննարկումների ֆոնին առ այն, որ պետական պաշտնյաներն իրավունք չունեն սահմանափակելու պետական միջոցներով ստեղծված պաշտոնական էջերի մեկնաբանությունների հնարավորությունը, քանի որ դա կարող է դիտարկվել որպես խոսքի ազատության իրավունքի սահմանափակում:

Փակ է նաև դեսպան Մակունցի անձնական, ինչպես նաև դեսպանության թվիթերյան էջերի մեկնաբանությունների հնարավորությունը այն պարագայում, երբ ՀՀ ԱԳՆ-ն տարիներ շարունակ իր թվիթերյան դիվանագիտությունը (twiplomacy) համարում էր իր առաջնահերթ հարթակներից մեկը:[19]

---

[18] Դեսպան Մակունցի հեռախոսազրույցը ԱՄՆ Ազգային անվտանգության խորհրդի եվրոպական հարցերով ավագ տնօրեն Ամանդա Սլոթի հետ, https://usa.mfa.am/hy/news/2021/10/01/Դեսպան%20Մակունցի%20հեռախոսազրույցը%20ԱՄՆ%20Ազգային%20անվտանգության%20խորհրդի%20Եվրոպական%20հարցերով%20ավագ%20տնօրեն%20Ամանդա%20Սլոթի%20հետ/9592.

[19] Հայաստանի ԱԳՆ-ն Twiplomacy-ի 18-րդ հորիզոնականում է, https://mediamax.am/am/news/foreignpolicy/29348/.

Ընդհանուր առմամբ տպավորություն է ստեղծվում, որ Լիլիթ Մակունցն առանձնապես չգիտի, թե ինչպես օգտվել Թվիթերից: Մասնավորապես, գրառումներից մեկում դեսպան Մակունցը օգտագործել է @dod օգտատիրոջ անունը, կարծելով թե այն պատկանում է պաշտպանության դեպարտամենտին (պաշտպանության դեպարտամենտի պաշտոնական թվիթերյան հաշիվը @DeptofDefense է), սակայն իրականում այն պատկանում է ոմն David Lee օգտատիրոջը: Նույն թվիթում նա կիրառել է @LauraCooper օգտատիրոջ անունը, կարծելով թե այն պատկանում է պատշպանության քարտուղարի փոխօգնական Լորա Քուփերին, սակայն իրականում դա նրա օգտահաշիվը չէ:[20]

Լիլիթ Մակունցը կոնգրեսական Քեթրին Քլարկի հետ

Լիլիթ Մակունցը պաշտոնավարման առաջին 100 օրերի ընթացքում որևէ հարցազրույց չի տվել ամերիկյան որևէ մեդիա հարթակին, որևէ հոդված չի տպագրել ամերիկյան մամուլի էջերում և չի աշխատել ամերիկյան մամուլի հետ, ինչը պատերազմի արդյունքում պարտված երկրի դեսպանի համար պետք է առաջահերթություն լիներ՝ իրողությունները ամերիկյան հանրությանը ներկայացնելու համար:

[20] Լիլիթ Մակունցի թվիթերյան գրառումը, https://twitter.com/LilitMakunts/status/1440032712379621385?s=20

Աշխատանքը Կոնգրեսի հետ

Սեպտեմբերից Լիլիթ Մակունցը հանդիպումներ է ունեցել որոշ կոնգրեսականների հետ, մասնավորապես՝ Ֆրենկ Փալոնի[21], Ջեքի Սփիրի[22], Դեյվիդ Փրայսի[23], Ջիմ Կոստայի[24], Ադամ Շիֆի[25], Դեյվիդ Վալադաոյի[26], Բրեդ Շերմանի[27], Նիկոլ Մալիոտակիսի[28], Քեթրին Քլարկի[29] և Աննա Էշուի[30] հետ: Ընդ որում, այս հանդիպումների մի մասը տեղի է ունեցել հեռավար ձևաչափով: Այս կոնգրեսականների մեծ մասը Դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչներ են (10 կոնգրեսականից 8-ը): Հանրապետական կուսակցության ներկայացուցիչներն են միայն Դեյվիդ Վալադաոն և Նիկոլ Մալիոտակիսը: Գրեթե նույն հարաբերակցությամբ՝ 10 կոնգրեսականից 9-ը, Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի անդամներ են, բացառությամբ Դեյվիդ Փրայսի: Կոնգրեսականների

---

[21] Դեսպան Մակունցի առցանց հանդիպումը կոնգրեսական Փալլոնի հետ, https://usa.mfa.am/hy/news/2021/09/08/դեսպան-մակունցի-առցանց-հանդիպումը-կոնգրեսական-փ/9485.

[22] Դեսպան Մակունցի հեռավար հանդիպումը կոնգրեսական Սփիրի հետ, https://usa.mfa.am/hy/news/2021/09/10/դեսպան-մակունցի-հեռավար-հանդիպումը-կոնգրեսական-սփիրի-հետ/9488.

[23] Դեսպան Մակունցի հեռավար հանդիպումը կոնգրեսական Փրայսի հետ, https://usa.mfa.am/hy/news/2021/09/21/դեսպան-մակունցի-հեռավար-հանդիպումը-կոնգրեսական-փրայսի-հետ/9541.

[24] Դեսպան Մակունցի հանդիպումը Կոնգրեսական Կոստայի հետ, https://usa.mfa.am/hy/news/2021/09/22/դեսպան-մակունցի-հանդիպումը-կոնգրեսական/9553.

[25] Դեսպան Մակունցի հեռավար հանդիպումը կոնգրեսական Շիֆի հետ, https://usa.mfa.am/hy/news/2021/09/29/դեսպան-մակունցի-հեռավար-հանդիպումը-կոնգրեսական-շիֆի-հետ/9581.

[26] Դեսպան Մակունցի հեռավար հանդիպումը կոնգրեսական Վալադաոյի հետ, https://usa.mfa.am/hy/news/2021/09/30/Դեսպան%20Մակունցի%20հեռավար%20հանդիպումը%20կոնգրեսական%20Վալադաոյի%20հետ/9591.

[27] Լիլիթ Մակունցի հանդիպումը կոնգրեսական Բրեդ Շերմանի հետ, https://twitter.com/BradSherman/status/1450547705852436484?s=20.

[28] Դեսպան Մակունցի հանդիպումը կոնգրեսական Մալիոտակիսի հետ, https://usa.mfa.am/hy/news/2021/10/21/դեսպան-մակունցի-հանդիպումը-կոնգրեսական-մալիոտակիսի-հետ/9692.

[29] Դեսպան Մակունցի հանդիպումը կոնգրեսական Քլարկի հետ, https://usa.mfa.am/hy/news/2021/10/26/դեսպան-մակունցի-հանդիպումը-կոնգրեսական-քլարկի-հետ/9695.

[30] Դեսպան Մակունցի հանդիպումը կոնգրեսական Էշուի հետ, https://usa.mfa.am/hy/news/2021/10/28/դեսպան-մակունցի-հանդիպումը-կոնգրեսական-էշուի-հետ/9714.

հետ մեկ այլ հանդիպում տեղի ունեցավ նոյեմբերի 2-ին: Մասնավորապես՝ Լիլիթ Մակունցը հանդիպեց Ֆրենկ Փալոնի, Սյուզան Լիի, Խուան Վարգասի, Ջեյք Օքինքլոսի, Դեյվիդ Սիսիլինի, Ջուդի Չուի, Ջեն Շըքաուսկիի, Բրենդա Լորենսի, Մարսի Քափթուրի, Մայք Քուիգլիի, Հեյլի Սթիվենս և Բրեդ Շերմանի հետ:[31] Այս բոլոր կոնգրեսականները դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչներ են, ինչպես նաև Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի անդամներ: Բոլոր կոնգրեսականները չափազանց լավ պատկերացում ունեն Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Այդ առումով առավել նպատակահարմար կլիներ, որ Լիլիթ Մակունցը հանդիպումներ ունենար և հետևողական աշխատանք տաներ ոչ միայն հայկական հանձնախմբի և հայամետ կոնգրեսականների հետ, այլ այն կոնգրեսականների, ովքեր չեզոք են կամ ակտիվ աշխատում են Ադրբեջանի և Թուրքիայի լոբբիստների հետ: Նման աշխատանքի բացակայության արդյունքում ամերիկյան որոշ կոնգրեսականներ շնորհավորում են Ադրբեջանին «տարածքային ամբողջականության վերականգնման կապակցությամբ»:[32]

Լիլիթ Մակունցը կոնգրեսական Բրեդ Շերմանի հետ

[31] Դեսպան Մակունցի հանդիպումը Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի տասնյակից ավել անդամների հետ, https://usa.mfa.am/hy/news/2021/11/02/դեսպան-մակունցի-հանդիպումը-կոնգրեսի-հայկական-հարցերով-հանձնախմբի-տասնյակից-ավել-անդամների-հետ/9715.

[32] Տե՛ս, օրինակ, սույն հայտարարությունը՝ https://twitter.com/azembassyus/status/1461054823667744771?s=20

Հանդիպումներ այլ կազմակերպությունների հետ

Լիլիթ Մակունցը Դանիել Թվինինգիի հետ

Նշված ժամանակաշրջանում Լիլիթ Մակունցը հանդիպումներ է ունեցել ժողովրդավարության խթանմանն աջակցող մի քանի կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Մասնավորապես՝ Ազգային ժողովրդավարության ինստիտուտի («NDI») տնօրեն Դերեք Միտչելի հետ:[33] Մեկ այլ հանդիպում է եղել Միջազգային հանրապետական ինստիտուտի («IRI») նախագահ Դանիել Թվինինգի և Եվրասիայի տարածաշրջանի տնօրեն Սթիվեն Նիքսի[34], ինչպես նաև Ժողովրդավարության ազգային հիմնադրամի («NED») նախագահ Դեյմոն Ուիլսոնի հետ:[35] Սույն կազմակերպությունները ակտիվ գործունեություն են իրականացնում Հայաստանի Հանրապետությունում:

Տիկին Մակունցը հասցրել է նաև հեռավար հանիպում ունենալ ԱՄՆ Խաղաղության կորպուսի տնօրենի պաշտոնակատար Քերոլ Սպանի հետ:[36] Հիշեցնենք, որ Լիլիթ Մակունցը 2016-2018թթ. աշխատել է Երևանի Խաղաղության կորպուսում:[37]

---

[33] Հանդիպում Դերեք Միթչելի հետ, https://twitter.com/LilitMakunts/status/1435668759956660224?s=20

[34] Դեսպան Մակունցի հանդիպումը IRI կազմակերպության նախագահ Դանիել Թվինինգի և Եվրասիա տարածաշրջանի տնօրեն Սթիվեն Նիքսի հետ, https://usa.mfa.am/hy/news/2021/10/07/դեսպան-մակունցի-հանդիպումը-iri-կազմակերպության-նախագահ-դանիել-թվինինգի-և-եվրասիա-տարածաշրջանի-տնօրե/9641.

[35] Լիլիթ Մակունցի հանդիպումը Ժողովրդավարության ազգային հիմնադրամի նախագահ Դեյմոն Ուիլսոնի հետ, https://twitter.com/LilitMakunts/status/1450490315366879233?t=nsM0iD1cnR4t5BAugJLypg&s=19.

[36] Դեսպան Մակունցի հեռավար հանդիպումը ԱՄՆ Խաղաղության կորպուսի տնօրենի պաշտոնակատար Քերոլ Սպանի հետ, https://usa.mfa.am/hy/news/2021/09/21/դեսպան-մակունցի-հեռավար-հանդիպումը/9552.

[37] Լիլիթ Մակունցի կենսագրությունը, https://usa.mfa.am/hy/ambassador/

Հոկտեմբերի 22-ին ՀՀ դեսպանությունը ընթրիք էր կազմակերպել՝ «Մերիդիանի» գլխավոր հանդիսությանը աջակցելու նպատակով:[38] «Մերիդիան» կազմակերպության հիմնական նպատակներից մեկն է ԱՄՆ ազդեցության տարածումը և դերի հզորացումը ողջ աշխարհի վրա:[39] Ինչ վերաբերում է ԱՄՆ-ում հայ համայնքի հետ կապերին, հարկ է ընդգծել, որ տիկին Մակունցը իր պաշտոնավարման առաջին օրվանից մինչև այսօր ոչ մի հանդիպում չի ունեցել ԱՄՆ-ում հայկական համայնքը ներկայացնող երկու կարևորագույն կազմակերպությունների՝ Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի («ANCA») և Ամերիկայի հայկական համագումարի («AAA») ներկայացուցիչների հետ: Ամերիկայի հայ համայնքի հետ շփումները սահմանափակվել են Իրավաբանների հայկական ասոցիացիայի մի քանի անդամների հետ հանդիպմամբ Նյու Յորքում[40] և Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության 102-րդ ամենամյա ընթրիք-հանդիպմանը իր մասնակցությամբ[41]: Ինչ վերաբերում է ԱՄՆ-ում պրոֆեսիոնալ լոբբիստների ծառայությունից օգտվելուն, ապա տիկին Մակունցի պաշտոնավարման ընթացքում ԱՄՆ-ում ՀՀ դեսպանությունը որևէ պայմանագիր չի կնքել ԱՄՆ որևէ լոբբիստական կազմակերպության հետ: ԱՄՆ-ում ՀՀ դեսպանության և ամերիկյան լոբբիստական կազմակերպության միջև կնքված վերջին պայմանագրի ժամկետն ավարտվել է 2021թ. մարտի 31-ին:[42]

Հանդիպում գիտահետազոտական կենտրոնների և ակադեմիական շրջանակների հետ «think tanks»

Վաշինգտոնում հարյուրավոր գիտահետազոտական ինստիտուտներ և վերլուծական կենտրոններ են գործում, որոնց հիմնական նպատակն է պետական մարմիններին որակյալ վերլուծություններ տրամադրել ամենատաբեր ուղղություններով: Յուրաքանչյուր դեսպանություն մշտապես հետևում է

[38] Մերիդիանի գլխավոր հանդիսությանը աջակցող ընթրիք դեսպանությունում, https://usa.mfa.am/hy/news/2021/10/22/մերիդիանի-գլխավոր-հանդիսությանը-աջակցող-ընթրիք-դեսպանությունում/9693.

[39] Մակունցը ԱՄՆ ազդեցության տարածո՞ղ, https://hraparak.am/post/2c133fe8324f53d67de69c9736fb76a8

[40] Տես հղում 12:

[41] Դեսպան Մակունցի՝ Ֆրեզնո այցի վերաբերյալ, https://usa.mfa.am/hy/news/2021/10/23/դեսպան-մակունցի՝-ֆրեզնո-այցի-վերաբերյալ/9694.

[42] Letter of Engagement between Copper Strategies LLC and the Embassy of Armenia to the United States, https://efile.fara.gov/docs/6884-Exhibit-AB-20201210-2.pdf.

գիտահետազոտական կենտրոնների գործունեությանը՝ հասկանալու համար, թե այդ կենտրոնները ինչ են «շշնջում» Պետդեպարտամենտի, Պենտագոնի, Սպիտակ տան «ականջներին»: Աշխատելով այս կենտրոնների հետ՝ հնարավոր է ձեռքը պահել Վաշինգտոնի զարկերակի վրա և ազդեցություն ունենալ որոշումների կայացման գործընթացի վրա: Տիկին Մակունցը 100 օրերի ընթացքում ընդամենը մեկ անգամ է հանդիպում-քննարկում անցկացրել «Ատլանտյան խորհրդում» («Atlantic Council»), որտեղ միջոցառմանը մասնակցել են 12 հրավիրյալ՝ ներառյալ Լիլիթ Մակունցը, դեսպանության աշխատակից Վարդուհի Մելիքյանը, մոդերատոր Ջոն Հերբստը, Հայաստանում ԱՄՆ նախկին դեսպան Ջոն Հեֆֆերնը:[43] Լիլիթ Մակունցը որևէ հանդիպում չի ունեցել այլ գիտահետազոտական կենտրոններում կամ համալսարաններում և ակադեմիական շրջանակներում:

Աշխատանք Վաշինգտոնում հավատարմագրված այլ պետությունների դեսպանների հետ

Ուսումնասիրված ժամանակահատվածում Լիլիթ Մակունցի և այլ դեսպանների հետ հանդիպումների վերաբերյալ որևէ տեղեկություն չի եղել:

Աշխատանք ԱՄՆ ազգային կառույցների և կրոնական կազմակերպությունների հետ

Ուսումնասիրված ժամանակահատվածում Լիլիթ Մակունցը հանդիպումներ չի ունեցել ազդեցիկ կրոնական կազմակերպությունների և եկեղեցիների հետ: Նման կառույցների վառ օրինակներ են ԱՄՆ-ում գործող Բողոքական եկեղեցին, Ավետարանական եկեղեցին, Կաթոլիկ եկեղեցին և այլն: Տիկին Մակունցը հանդիպումներ չի ունեցել նաև ազգային կառույցների հետ, ինչպիսիք են հրեական, հունական, կիպրոսյան, ինչպես նաև այլ ազգային և քաղաքական կառույցների ու կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Ինչպես արդեն նշվեց, Լիլիթ Մակունցը հանդիպումներ չի ունեցել նաև Հայ Առաքելական եկեղեցու թեմերի առաջնորդների հետ:

[43]«Ատլանտյան խորհրդում» Մակունցի հանդիպումը, https://twitter.com/LilitMakunts/status/1461411114697244677?s=20

Եզրակացություն

Ուսումնասիրելով Լիլիթ Մակունցի գործունեությունը պաշտոնավարման առաջին 100 օրերի ընթացքում՝ կարելի է հանգել մի քանի կարևոր եզրակացությունների: Մասնավորապես, կարելի է պնդել, որ Լիլիթ Մակունցը խուսափում է մեծ համայնքային միջոցառումներին մասնակցելուց: Նա որևէ ձևով չի դիմել համայնքին, չի փորձել համայնքի հետ ինստիտուցիոնալ փոխհարաբերությունների հիմքեր դնել, չի համագործակցում ազգային կառույցների, լոբբիստական կազմակերպությունների և ավանդական կուսակցական կառույցների հետ: Կոնգրեսի և գործադիր իշխանության մարմինների հետ շփումները հիմնականում կրել են ճանաչողական և արարողակարգային բնույթ: Կոնգրեսում աշխատանքը տարվել է հիմնականում դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչների հետ, ովքեր հայկական հանձնախմբի անդամներ են: Այդ կոնգրեսականները շատ ավելի վաղուց են զբաղվում հայ-ամերիկյան հարցերով, քան Լիլիթ Մակունցը և քաջատեղյակ են բոլոր խնդիրներին: Նշված ժամանակահատվածում աշխատանքներ չեն տարվել այն կոնգրեսականների հետ, որոնց դիրքորոշումներն առավելապես կրում են թուրքամետ և ադրբեջանամետ բնույթ:

Աշխատանքներ չեն տարվել ամերիկյան կրոնական և ազգային կառույցների հետ, որոնց ազդեցությունը ԱՄՆ-ում չափազանց մեծ է թե՛ քաղաքական, թե՛ հասարակական կյանքում: Հատկանշական է, որ տիկին Մակունցը հանրային հայտարարություններ չի արել առաջ քաշվող երկկողմ օրակարգի և դրա առանձնահատկությունների մասին: Հարկ է շեշտել, որ տիկին Մակունցի պաշտոնավարման 100 օրերի ընթացքում հայ-ամերիկյան հարաբերություններին վերաբերող նոր օրակարգային հարցեր չեն ձևավորվել:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ Լիլիթ Մակունցի գործունեությունն ԱՄՆ-ում կրում է առավելապես արարողակարգային բնույթ:

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*